



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան-0015, Մ. Խորենացու 3, 7

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին»
պայմանագրի ստորագրման նպատակահարմարության մասին**

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի հիման վրա Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների, այդ թվում նաև 2015 թվականի հունվարի 2-ից Եվրասիական տնտեսական միությանը անդամակցած Հայաստանի Հանրապետության միջև ձեռք է բերվել պայմանավորվածության Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Մաքսային օրենսգիրք) ընդունման շուրջ: Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագիրը հանդիսանում է միջպետական պայմանագիր, որի կողմերն են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները:

Ներկայումս Եվրասիական տնտեսական միության տարածքում մաքսային հարաբերությունները կարգավորվում են 2009 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված Մաքսային միության մաքսային օրենսգրքով և թվով 21 միջազգային պայմանագրերով: Մաքսային օրենսգիրքը փոխարինելու է Մաքսային միության մաքսային օրենսգրքին: Մաքսային օրենսգրքի նախագիծը ենթադրում է 16 միջազգային պայմանագրերի կողմից կայացում, որոնք Մաքսային օրենսգրքի ուժի մեջ մտնելու պահից ամբողջովին կամ մասամբ կկորցնեն իրենց իրավական ուժը:

Մաքսային օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո որպես առանձին միջազգային պայմանագրեր կմնան միայն 5-ը, որոնք առնչվում են մաքսային

հարաբերություններին, սակայն անմիջականորեն չեն կարգավորում մաքսային իրավահարաբերությունները: Դրանք այն պայմանագրերն են, որոնք առնչվում են Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի աշխատանքներին, մաքսային ծառայությունների ներկայացուցչությունների գործունեությանը, ինչպես նաև անձանց վարչական և քրեական պատասխանատվության ենթարկելուն:

Մաքսային օրենսգրքի ընդունման հիմնական նպատակը Եվրասիական տնտեսական միությունում միասնական մաքսային կարգավորման ապահովումն է, որը ներառում է ԵՏՄ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման, ԵՏՄ մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս դրանց գտնվելու և օգտագործման կարգի ու պայմանների, ԵՏՄ մաքսային տարածք ապրանքների ներմուծման, ԵՏՄ մաքսային տարածքից դրանց արտահանման, ժամանակավոր պահպանման, դրանց մաքսային հայտարարագրման ու բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների, այլ մաքսային գործառնությունների կատարման կարգի, մաքսային վճարների, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ու մաքսային հսկողության անցկացման կարգի սահմանումը, ինչպես նաև մաքսային մարմինների և ԵՏՄ մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս ապրանքների տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքներ իրականացնող անձանց միջև իրավազոր հարաբերությունների կանոնակարգումը:

Օրենսգիրքը կազմված է 9 բաժիններից, 61 գլուխներից և 464 հոդվածներից:

Օրենսգրքի նախագիծը 2015-2016թթ. շարունակաբար քննարկվել է Մաքսային օրենսդրության կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի և ԵՏՄ մաքսային օրենսգրքի նախագծի մշակման նպատակով աշխատանքային խմբին կից ստեղծված փորձագիտական խմբի նիստերի ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նպատակահարմար ենք համարում «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի ստորագրումը:



Վ.ՎԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ